



Rédaction et Administration :
7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԻ. Տարի - ՅՈՒԼԻՍ 1937



13^{me} Année - Juillet 1937

Խմբագրական

Մեր վկայութիւնը

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Անձին փրկութիւնը գործել

Զանկա պիտի տեսնենք ինչպէս որ է

Յար. Խ. Տումպուկեան

Շնորհաց ծովէն

Գերեզմարձի մը վկայութիւնը

Բ. Ինճառտպեան

Կենաց ածուներէն

Երկինք մեկնող երկու ճամբորդներ

Վեր. Ժ. Կ. Պարսումեան

Սերտողութիւն

Մեր Տէր Յիսուս Քրիստոս

Պատմական

Մեծ դէմքեր ու դէպքեր...

Գ. Գ. Խաչիկեան

Պատանեաց

Երեք կարեւոր դասեր

Յ. Ն. Ղ.

Զայն ունիմ



ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամասներէր թէ եւ փրանտիայ Աւետարանա-
կան եկեղեցիներու պաշտօնածերքն է, այսու ամենայնիւ,
նորաստի ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարաւը կը զգան Աստուծոյ խօսքին անխաղախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բոլորի համար իսկ «Բանին»
ներկայացուցիչն ալ չճանչնար ու եւ յարանումունքիւն մը,
հասարակ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամասներէր կրկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարսէլի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն գործ), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրոֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո՛ր թէ հայերէնին ժամանակէն ալ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
դիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebatel — LYON (France)

որու զրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

ՊՈՍՏՈՐԱՆՈՒՄ

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

ԹՈՒՐԿԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 60 սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ ԹՈՒՐԿԵՐԷՆ միասին Ֆրանսա: 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման Տոլ. 1. 75
(Դիւրութեան համար travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամականիքներով կրնայ զրկուիլ):

Թղթակցութիւններ եւ յօդուածներ զրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ /սկ զրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN

7, Rue Papère


MARSEILLE (France)

Մանուսյով գրամական առաքումի առթիւ հաճեցէք մանտոյին վրայ չմուսաւ գրելու
H. N. Ghazarossian, (Rédacteur) C. C. No. 182.53 Marseille

Արմենցի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:

Եփես. Է. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա'լ վախճանք, որ չըլլայ Թէ
Անոր Կանգիտը մանկու. խոստմունքէն որ մեզի մնացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի ալ առ-
կէ քիչ մը տունէն
Ան որ գալու է՝
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԳ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1937

ԹԻԻ 7



ՄԵՐ ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Ամօթ մի սեպեր մեր Տէրոջը վկայութիւնը Բ. Տիմ. Ա. 8
Որու մենք ամէնա ալ վկայ ենք Գործ. Բ. 32

Ներկայիս վկայութիւնը սովորութիւն մը ե-
ղած է կարգ մը եկեղեցիներու մէջ եւ անոնք
որ իրենց նախկին կամ տեղական եկեղեցիներու
մէջ ասիկա տեսած ու լսած չեն, նորու-
թիւն մը կը սեպեն եւ կը զարմանան կամ ան-
յարմար բառերով կը պիտակեն վկայութիւնն ու
վկայողները: Այսպիսիներ լաւ կ'ընեն եթէ Աս-
տուծոյ խօսքը ձեռքերնին առած քննեն եւ տես-
նեն անոր էջերուն մէջ Աստուծոյ խորհուրդը վե-
կայութեան մասին: Իսկ մենք ալ մեր կողմէն
այս տողերը կը գրենք պզտիկ լոյս մը տալու
անոնց որոնք կը փնտռեն եւ անոնց ալ որոնք
կը վկայեն:

Վկայութիւնը եւ վկան.— Իրողութիւն մը
տեսնելէ եւ լսելէ յետոյ անոր գոյութիւնը հաս-
տատելը վկայութիւն է եւ զայն հաստատող անձն
ալ վկայ է: Յիսուսի աշակերտները — առաք-
եալները վկաներ էին այն բոլոր բաներուն գո-
րոնք տեսան՝ Յիսուսի հետ երեք ու կէս տարի
քալելով: Անոնք վկաներ էին Անոր մահուան ու
յարութեան, վասնզի տեսան զԱյն կրկին ու կըր-
կին: տեսան նաեւ Անոր համբարձումը ու լսեցին
Անկէ իրենց եղած խոստումները, որոնցմէ ոմանք
կատարուեցան իրենց վրայ եւ ուրիշներ ալ պի-
տի կատարուէին: Այս ըլլալիքներուն մասին ալ
անոնք կրնային վկայել նոյնքան զօրութիւնով,
քանզի Աստուծոյ խօսքին ճշմարտութեան ապա-
ցոյցը բազում անգամներ վայելած էին իրենց
կեանքին մէջ ինչպէս նաեւ տեսած էին անցեա-
լի սրբոց վրայ:

Վկայութեան անհրաժեշտութիւնը.— Պօղոս
առաքեալ իր սիրելի որդւոյն Տիմոթէոսի կը

պատուիրէ ամօթ չսեպել Տէրոջը վկայութիւնը:
Ինչպէս ամէն իրողութիւն առանց վկայի մթու-
թեան մէջ կը մնայ եւ մարդիկ չեն իմանար
զայն, նոյնպէս Աստուծոյ խօսքին ճշմարտու-
թիւնը առանց վկայի անթափանցելի եւ անհաս-
կընալի կը մնայ եւ շատ քիչեր պիտի կրնային
խարխափելով անոր հասնիլ: Ասոր օրինակն է
միջին դարը: Պօղոս առաքեալ նոյնպէս կ'ըսէ,
Խօսքը լման քարոզէ, այսինքն վկայութիւնը
ճշմարտութեան ամէն կողմերուն վրայ եւ անոնց
մասին լման ըլլալու է, որպէսզի մարդիկ ճանչ-
նան զայն իր իսկութեամբը եւ կարող ըլլան
լուսաւորուիլ անոր լեցունութիւնով (կարգալ Բ.
Տիմ. Ա. 8-10):

Տէր Յիսուս ըսաւ Իր աշակերտաց թէ Հոգւոյն
Սրբոյ իրենց վրայ եկած ատենը զօրութիւն պի-
տի առնեն եւ իրեն համար վկաներ պիտի ըլ-
լան Երուսաղէմի մէջ եւ բոլոր Հրէաստանի ու
Սամարիայի մէջ եւ մինչեւ երկրի ծայրերը:
Բայց վկայութիւնը սահմանափակուած չէ մի-
այն առաքելոց շրջանակին մէջ: Յիսուս տեսնե-
լով բժշկուած զիւահարն ալ որ իր ետեւէն
գալ կ'ողզէր որպէս Իր աշակերտը ու թերեւս
առաքեալ ըլլալու յուսով, ըսաւ, «Դարձիր քու
տունդ ու պատմէ ինչ որ Աստուած քեզի ըրաւ»:
Գործոց Ը. 41 մէջ կը կարդանք թէ քրիստոնէ-
ութեան առաջին շրջանին առաջին հալածան-
քէն յետոյ, առաքեալներէն զատ որոնք Երուսա-
ղէմ մնացին, ցիրուցան եղածներ կը պտըտէին
ու խօսքը կը քարոզէին: Նոյն գրքին ԺԱ.ի մէջ
կը տեսնենք թէ անոնք մինչեւ Փիւնիկէ ու
Կիպրոս եւ Անտիոք հասան... Տէր Յիսուսը քա-

րողելով: Այս քարոզութեանց նիւթն էր յարուցեալ Տէր Յիսուս Քրիստոսը, որ զիրենք ալ ազաւած էր մեղքի եւ մահուան ճիրաններէն եւ զանոնք փրկած եւ յարուցած եւ երկնաւորներուն մէջ նստեցուցած էր: Ճշմարտութեան այս վեկայութիւնը քարոզուելով վկաներու միջոցով մինչեւ մեղի հասած է եւ մենք ալ վկայութիւնը պիտի շարունակենք ուրիշները հաւատքի հնազանդեցնելու:

Ուրեմն որպէսզի աշխարհ հասկնայ Աստուծոյ մեծ փրկութեան ծրագիրը, պէտք է որ Աստուծոյ բոլոր վկաները վկայեն: Տեսանք ալ թէ վկայութիւնը առաքելոց առանձնաշնորհը չէր միայն, ամէնն ալ վկայեցին: Գործք Առաքելոց զԲրքին մէջ Պողոս առաքելաւի քարոզութեան հետ նաեւ իր անձնական վկայութեան կը հանդիպինք երկու անգամ, այն ալ մանրամասնութիւններով, իսկ միւս թուղթերուն մէջ կը հանդիպինք բազում անգամներ:

Եկեղեցւոյ առաջին շրջանին հաւատացեալներ Ս. Գրքը չունէին այն քանակով ինչպէս մենք ունինք, ոչ ալ այն կատարելութեամբ ինչպէս որ մենք մեր ձեռքերուն մէջ կ'ընենք, քանզի Նոր Կտակարանը դեռ կազմուած չէր: Անոնք յաւէտ իրենց անհատական փորձառութիւնը կը ներկայացնէին մարդոց, պատմելով ինչ որ Աստուծոյ իրենց ըրած էր: Միթէ ընթերցողներս երբեք հանդիպած չե՞նք աշուղտի անձերու, որոնք կարդալ չգիտնալով Ս. Գրքին հետ մեղի չափ յարաբերութեան մէջ չեն, բայց իրենց անձնական փորձառութիւնէն, ապրուած կեանքէն կը խօսին: Անոնք մարդկայինէ տարբեր գորութեամբ մը լեցուած եւ շարժուած կը վկայեն:

Եկեղեցի մը, ուր վկայութիւն չկայ, վկայող չկայ, մեռած է: Եկեղեցիին մէջ հաւատացեալները օրէ օր նոր թնրմութեամբ վկայելու են, ինչ որ Տէրը իրենց ըրած է: Ու հաւատացեալ մը ամէն օր նոր փորձառութիւնէ անցնելու է:

Վկայութեան ծախողը իմը. — Բայց երբեմն վկայութիւնը ձախող էլ կ'ունենայ, փոխանակ օգտակար ըլլալու, զրգոթութիւն երեւան կը բերէ, փոխանակ մարդոց վրայ բարեբար ազդեցութիւն ձգելու՝ վատ եւ զաւթակղեցուցիչ ազդեցութիւն մը կը թողու: Նոյնիսկ հոգեւորներ երբեմն վկայութիւններ լսելով աւելի կը տրտմին քան թէ կ'ուրախանան: Ինչո՞ւ արդեօք:

Պատասխանը շատ պարզ է: Վկայութիւնը Ս, Հոգիէն կուգայ եւ Անոր միջոցաւ տեղի կ'ունենայ: Յիսուս ըսաւ, Հոգւոյն Սրբոյ ձեր վրայ եկած ատենը գորութիւն պիտի առնէք եւ Ինծի

համար վկաներ պիտի ըլլաք: Վկաներ ըլլալու մէկ պայման կայ — վերէն գորութիւն առնել: Պետրոս առաքեալ Պենտեկոստէի մէջ նոյն անձն էր ինչ որ քահանայապետին դաւիթին մէջ, շատ ատեն անցած չէր, հազիւ 52 օր, ունէր նոյն փորձառութիւնը, գիտէր Յիսուսը, տեսած էր Անոր հրաշքերը, դաւանութիւնն ալ տուած էր, ջուրին վրայ ալ քալած էր, սակայն վկայութեան գորութիւնը ընդունած չէր: Երբ ընդունեց այդ գորութիւնը, սկսաւ վկայել, եւ երբ քահանաներն ու քահանայապետները, ժողովուրդին իշխանները կ'ստիպէին որ չվկայէ, ըսաւ, «Առաւել Աստուծոյ հնազանդիլ պէտք է քան թէ մարդոց»: «Ձայն որ տեսանք ու լսեցինք, չենք կրնար չխօսիլ: Ներքին մարդուն մէջ բնակելու համար եկող Ս. Հոգին կ'ստիպէ զայն վկայելու բարի դաւանութիւնը: Աստուծոյ մեղի գորութեան, սիրոյ եւ զգաստութեան հոգին տուաւ:

Ուրեմն վկայութիւն մը երբ Ս. Հոգիէն ներշնչուած չէ, կը վրիպի նպատակէն: Վկայութիւններ կան որ Քրիստոսի անուշ հոտը ցոյց տալէ աւելի անձ կը հոտին պժգալիօրէն: Կան նաեւ ստիպողական վկայութիւններ, ինչպէս նաեւ զուտ պերճախօսական եւ ցուցադրական: Այսպիսի վկայութիւն մը բնականաբար անպտուղ կ'ըլլայ: Վկայութեան միակ նպատակն ըլլալու է Տէրոջը փառքը, որպէսզի Տէր Յիսուսի փառաւորութիւնն ու թագաւորութիւնը ի յայտ բերուի: Վկայութիւն մը ծաղրելի կ'ըլլայ եւ կը ձախող ըլլորովին երբ վկայող խօսքերուն ետեւ թագնուած չըլլայ հաւատոյ կեանքը: Միթէ օրական հացին համար ամէն օր հոգ ընող հաւատացեալ մը Տէրոջը ողորմութեանց մասին կրնա՞յ վկայել, կամ մեղքերու մէջ ապրող մէկը մեղքերու թողութեան վստահութեան մասին: Սէր չունեցող մէկը սիրոյ մասին եթէ վկայելու ըլլայ, միթէ լսելի՞ է, կամ կծծին ու ազահը կրնան անձնագործութեան եւ անձնութեան մասին վկայել կամ հպարտ հոգի մը խոնարհութեան մասին ճանել: Մութ ու մոռայլ դէմք կրող եւ ժպտող չճանչցող մէկու մը քրիստոնէական ուրախութեան մասին ըրած վկայութիւնը ունկնդիրներուն սիրտը կ'ուրախացնէ: Ուրեմն վկայութիւն եւ կեանք միասին կ'երթան եւ վկայութիւնը Ս. Հոգիէն ներշնչուած ըլլալու է Քրիստոսի փառքին համար: Ան որ աշուղտի վկայութիւն մը չկրնար տալ, աւելի լաւ կ'ընէ եթէ լուռ մնայ



ԱՆՁԻՆ ՓՐԿՈՒԹԻՒՆԸ

ԳՈՐԾԵԼ

(Փիլ. Բ. 12-13)

«Ուստի իմ սիրելիներս, ինչպէս ամէն ատեն հնազանդ եղաք, ոչ միայն իմ ներկայութեանս, հապա ալ աւելի հիմա, իմ բացակայութեանս ատեն, ահով ու դողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք (արտագործեցէք)»: Հոս գործածուած «ուստի» շաղկապը կը յանդգնի մեր փոքրիկ կեանքը կապել Բարձրեալ Տէրոջ փառաւորեալ կեանքին հետ: Առաքեալը ակնպիշ կը դիտէ թէ ինչպէս Տէր Յիսուս խոնարհելով իր գահէն մինչեւ ոտքերու պատուանդանը կ'իջնէ, մարդկային վիճակին բաժանորդ կ'ըլլայ, մեր ամենէն պաղ պէտքերը իր վրան կ'առնէ եւ նոյնիսկ մահուան սարսուռն ու խաւարը կը շօշափէ: «Ուստի», Տէրոջ այս փառքին առջեւ՝ որ ամէն բերան կը լոեցնէ, անձերնուդ փրկութիւնը գործեցէք: Արդարեւ փրկութեան միակ ճամբան՝ զոհողութեան ուղին է: Միմիայն ուրիշի մը քով իջնելով ու զայն իր դժուարութիւններէն բարձրացնելով կարելի կ'ըլլայ մեզի ինքզինքնիս բարձրացնել: Քրիստոնէական կեանքին մէջ գերակշիռ ճշմարտութիւն մըն է թէ՛ ծովը յաղթել կը նշանակէ:

Այնպէս կը թուի թէ երկնային ճամբան դէպի վար կը տանի, սակայն վեր ելլելուն գաղտնիքը նախ վար իջնելն է: Վար իջնելով արմատներ կ'արձակենք, որպէսզի վերը պտուղ բերենք: Ոչ մէկը կրնայ իր հոգ ընելովը (Անգլ. խորհելովը) իր հասակին վրայ կանգուն մը աւելցնել: Սակայն ճիշդ այս կրնայ ընել իր ուրիշներու մասին խորհելովը: Եթէ հիմա ծառայի մը կերպարանքը առնենք մեր վրայ, անպատճառ օր մը պիտի կրենք Թագաւորի մը դէմքն ու վեհափառութիւնը: Մինչ մեր եղբօրը ծառայելու եւ զանգեղեցիկացնելու կ'աշխատինք, հրաշալի յատկութիւններ յառաջ կուգան մեր նկարագրին մէջ: Այն ամէն ոյժը զոր ուրիշներու ծառայելու կը զոհենք, անդրադառնալով կը զօրացնէ ու կը բազմապատկէ մեր կարողութիւնը: Մեր հոգեւոր ուժերը՝ Աստուծոյ շնորհքով մեզի պարգեւուած կոկաններու կը նմանին: Բազմաթիւ հոգիներու

կեանքին մէջ այս կոկոնները ծաղկավաճառին ցուցափեղկին մէջ գտնուած կոկոններուն նման գոց ու անյայտ կը մնան: Անոնք չեն արտագործուիր, որովհետեւ մենք մեզի ինկած ծառայութեան բաժինը չենք բերեր, չենք հայթայթեր անհրաժեշտ պայմանները: Ան որ երբեք չծոիր ինկածները վերցնելու կա՛մ ցաւատանջները ըսփոփելու, ինքզինքը կը զրկէ այն տարրերէն որ անհրաժեշտ են իր ուժերը արգասաւորելու: Եթէ մեզի կը պատուիրուի որ արտագործենք, բացարձակապէս պէտք է որ ուրիշներու համար գործենք: Անկարելի է մեզի մեր Տէրոջը բարձրացման մէջ բաժին ունենալ՝ եթէ մեր աստիճանով չմասնակցինք: Անոր խոնարհութեան, Անոր ցաւերուն, Անոր յոգնութիւններուն: «Ան ելաւ ըսելու ի՞նչ է, միայն թէ որ ինք առաջ երկրի վարի կողմերը իջաւ»:

«Ահով ու դողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք»: Ահա այսպէս կատարելու ենք մեր ծառայութիւնը, սակայն վստահ ըլլալու ենք թէ հոս յիշուած ահն ու դողը գերիի մը անհամարձակ ու երկիւղալի վիճակը չէ: Մեր հայրը չուգեր որ իբրեւ գերիներ կենանք իր ոտքերուն առջեւ: Ան կը ցանկայ տղաքներու եւ աղջիկներու որոնք Աստուծոյ գաւակներու փառաւոր ազատութեամբ կը շարժին: Չուգեր որ ահաբեկ սողանք կեանքի ճամբայէն՝ վախնալով թէ ոեւէ վայրկեանի խարազանի հարուած մը կրնայ իջնել մեր ուսերուն: «Ասկէ ետքը ձեզ ծառայ չեմ անուաներ... հապա ես ձեզ բարեկամ անուանեցի»: Հոս յիշուած «ահ» բառին մէջ ի մի ձուլուած են սիրահարի մը ու գերիի մը վախը, վախ մը որ միայն կը բարձրացնէ ու կը պայծառացնէ մեր ուրախութիւնը: Սիրուհիի մը ներկայութիւնը դող կ'ազդէ անոր սիրահարին: Անիկա կը զգայ իր սիրուհւոյն չարտասանած փափաքը: Ընդդէմ այն վայրկեանին որ անոր բաղձանքը կը ծնի, կ'սկսի նաեւ իր ծառայութիւնը: Այսպէս զգալիկ ըլլալու ենք մեր Աստուծոյն ներկայութեան ու կամքին: Չգալու ենք Անոր նպատակին ամենէն փափուկ ակնարկութիւնները: Ընդդէմ ինչպէս որ բարտիին տերեւները ամրան առաւօտեան ամենէն մեղմ գեփիւռէն շարժելու կ'սկսին, նոյնպէս ալ մենք ազդուելու ենք Անոր շունչէն: Մեր ընկեր արարածներուն մէջ գործելու միջոցին կորսնցնելու չենք մեր սիրոյ շօշափումը Աստուծոյ հետ: Դողալով հսկելու ենք յաւիտեան կանը, որպէսզի պատրաստ ըլլանք ոեւէ վայրկեանի եւ ամէն բոլոր ընդունելու Յաւիտեանական

Միտքին հաղորդելիք պատգամը: Ուստի «Ահով ու դողով... զործեցէք» պատուէրը Հպարունակեր գերիի մը ծառայութիւնը՝ այլ նուիրուած սիրահարի մը ազնիւ պատրաստակամութիւնը:

«Վասնզի Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ»: Մեր գործելու միջոցին Աստուած չեղոք չը կենար: Անիկա մէկ կողմ կայնած մեր գործելուն չնայիր, այլ սուրբերուն գործակից կ'ըլլայ: Մեզի կը պատուիրուի դողալով արթուն կենալ, քանզի մեր Աստուածը շարունակ՝ թէ մեր շուրջը, թէ մեր մէջը հրաշալի գործեր կատարելու պատրաստ է: Միմիայն մեր մէջ ներգործութեամբ համեմատութեամբ կարող ենք մենք արտագործել: Ան կը ներգործէ «կամենալը»: Ան կ'ստեղծէ առաջին մղումը: Անոր հոգիէն կը ծնի ամէն հրաման: Ամէն ինչ որ սուրբ է, Անկէ ու միմիայն Անկէ յառաջ կուգայ: Սակայն ծաղրելի պիտի ըլլար այս պատուէրը՝ եթէ այդ սրբազան մղումները գործադրելու զօրութիւնը մեզի զլացուէր: Մեզի աւելի բոն պիտի ըլլար բաղձանք մը, որուն կարելի չըլլար հասնիլ: Շատ աւելի նախընտրելի է նպատակի մը հասնելու մղումը երբեք չզգալ, քան թէ զգալ ու չկրնալ անոր հասնիլ: Բայց եւ այնպէս մեր Աստուածը մեր մէջ կը ներգործէ «կամենալը ու ընելը»: Ան կը ներշնչէ ամենէն նախնական ձգտումը ու Ան կ'առաջնորդէ մեր ձգտածին հասնելու: Ան կ'ստեղծէ բաղձանքը ու մեզի միջոցներ կուտայ զայն իրականացնելու: Ան կ'ստեղծէ քաղցը ու Ան կը հայթաղթէ հացը: Իր բարի հոգիին միջոցով մեզի կը հաղորդէ ընելու զօրութիւնը, ըլլալու ոյժը եւ իր հաճութեանը սքանչելի նպատակները իրականացնելու կարողութիւնը:

Որքա՛ն ներշնչից է այս խօսքը: Մեզի կեանք ու լոյս կուտայ ուրիշներու ծառայելու: Խոնարհութեան ձորը խիստ շնորհալի վայր մըն է, եթէ Տէրոջը վախովը քալենք անոր մէջ: Ոչ թէ քարոտ անապատ մը, այլ գունազեղ, բուրումնաւէտ ծաղիկներու պարտէզ մը, ուր թռչնիկներու երգեր կը լսուին ամէն կողմէն: Իջնենք զառ ի վար, ու տակաւին շատ չիջած՝ խաղաղութեան անուշ շուշաններ պիտի գտնենք մեր ոտքերուն բոլորտիքը:

Թարգ. Անգլ.
Ն. Մ.

ԶԱՆԻԿԱ ՊԻՏԻ ՏԵՍՆԵՆՔ ԻՆԶՊԷՍ ՈՐ Է

Ա. ՅՈՎՀ. Գ. 2



Յերկնից իջաւ սիրով անբաւ,
Բանն Աստուծոյ մարմին եղաւ,
Յիսուս իմ Տէրս, քաւեց մեզքերս
Եւ ինք տուաւ Հոգւոյն գրաւ:
Փառք Աստուծոյ, Փրկիչս է Նա
Ու կենաց ջուր ու մանանա:
Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ,
Երբոր իջնէ փառքովս վըսեմ:

Սիրով անհուն մեր ամենուն
Մեղաց պատիժն իր վրան առաւ.
Ի փրկութիւն թափեց արիւն,
Գառն Աստուծոյ իմ տեղս մեռաւ:
Ալէլուիա, փառք իմ Փրկիչիս,
Անհուն շնորհքով փրկեց եւ զիս:
Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ,
Երբոր իջնէ թագովս վըսեմ:

Ողջո՛յն քեզ, այդ, սուրբ յաղթական
Յորժամ Յիսուս մեր Տէրն յարեաւ,
Դաժան մահուան փըշրեց շըղթան,
Փառօք յերկինս Նա համբարձաւ:
Փա՛ռք Աստուծոյ Որդւոյն յաւէտ
Ինքն է իմ Բահանայապետ,
Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ,
Երբ իջնէ «Նորն Երուսաղէմ»:

Նմանողաբար շարադրեց
ՅԱՐ. Խ. ՏՈՄՊԱԼԵԱՆ

Ծանօթ. — Այս եւ Մայիսի Թիւին մէջի երկու երգերն ալ կրնան երգուիլ Հոգեւոր Երգերու 90րդ (Գողգոթա) երգին եղանակով:



ԳԵՐԵԴԱՐՁԻ ՄԸ

ՎԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Իմ ներդրումն մէջ Տէրոջը ազադակեցի,
ու Անիկա ինձի պատասխան տուաւ:

Սաղ. ՃԻ. 1

Սոսկումով կը յիշեմ տարագրութեան դժուարացի օրերը: Սպանդանոց քշուող մարդկային կարաւանի մը մէջ կը գտնուէինք ես եւ մեր տան բոլոր անդամները: Հեթանոսական անգրթութեամբ կոտորեցին բոլորը, նաեւ հայրս, մայրըս, եղբայրներս եւ քոյրերս: Քիւրտ մը վերցուց զիս անոնց մէջէն որպէս մշակ իր քով պահելու համար: Բազմագութն Աստուած այս եղանակով ազատեց զիս յայտնի մահէ մը, որպէսզի ինձի Իր «մեծ փրկութիւնը» ցուցնէ Իր Որդւոյն Յիսուս Քրիստոսի ձեռքով: Յիսուսի Աստուած բարի է ամենուն. ինչպէս գրուած է, «Աստուած մարդու մը հոգին չառնէր, հապա միջոցներ կը հնարէ որպէսզի աքսորուածը Իրմէ աքսորուած չմնայ» (Բ. Թագ. ԺԴ. 14):

Հազիւ 10-11 տարեկան կայի, եւ ահա հասած հովիւ-մշակի մը պէս կը ծառայեցնէին զիս: Ոտքս միշտ բոպիկ, զլուխս բաց, վրաս չապիկ մը, փորս անօթի եւ ննջարանս ալ յարգանոց մըն էր: Այս թշուառութեան մէջ գէշը այն էր որ՝ զԱստուած ալ չէի ճանչնար, սպա թէ ոչ գէթ աղօթքով կրնայի գործնալ եւ Աստուծոյ սիրովը մխիթարուիլ: Բայց փառք հոգիներու Հօրը, Անիկա զիս կը ճանչնար, զիս կը սիրէր, զիս կը հոգար: Եւ հուսկ ուրեմն պիտի ճանչցընէր ինձի այն օրհնեալ Փրկիչը, որ «աշխարհ եկաւ մեղաւորները փնտռելու եւ փրկելու»:

Տարիներ անցան վրայէս, միշտ մէկը միւսէն աւելի տառապանքով լեցուն: Կատարելապէս ազատութեան ոչ մէկ յոյս ունէի: Քրթացած էի: Սակայն Աստուած որ մեծ է ողորմութիւնով, ազատութեան երկրորդ միջոց մը պատրաստած էր ինձի: Նախ մահէն եւ հիմա ալ գերութենէն պիտի ազատէր զիս, որպէսզի Իր անունը փառաւորեմ:

Գիշեր մը, երբ վշտաբեկ եւ յուսահատ սըրտով յարդի դէգերուն մէջ մխուած կը քնանայի, ձայն մը արթնցուց զիս: Ինձի այնպէս թընեցաւ թէ ազատ զիս կը կանչէ: Ականջներս սը-

րեցի: Հարուած ուշադրութեամբ սպասեցի: Եւ ահա նորն ձայնը մեղմ ու քաղցր շեշտերով ազանջիս կրկնուեցաւ, «Աստուծոյ ազադակէ, Անիկա կը լսէ քեզի, Անկէ խնդրէ հիմա, Ան պիտի օգնէ քեզի»:

Նոյն ժամուն յարդին վրայ ծնրադիր եւ թեւատարած աղօթեցի, «Աստուած իմ, Աստուած իմ, ալ հերիք սեպէ այս չարչարանքս եւ ազատէ զիս այս գերութենէս»: Աղօթեցի՝ Սակայն իրականութեան մէջ չէի գիտեր թէ որու հետ կը խօսիմ: Դարձեալ հալածեալի մը սրտադողովը զլուխս կախեցի յարդին մէջ եւ քնացայ:

Յաջորդ առաւօտ անձանօթ ուրախութեան մը մէջ սիրտս կը ծփար... Այն աստիճան երջանիկ էի որ՝ դէմքիս ճառագայթումէն քիւրտ աղաս բան մը նշմարողի պէս՝ «Կեալուո՞ր երես հագած ես այսօր» ըսաւ ինձի: Այդ օրերուն մէջ Տէրը ինձի այս կամ այն միջոցով իմացուց թէ՝ որբանոցներ բացուած են եւ հայ որբեր կը հաւաքուէին: Փախուստի որոշումը եւ ազատութեան յոյսերը մէկանց սկսան բռնկիլ ներսիդիս: Գիշերուան մէջ ինձի խօսողին ձայնը եւ Իրեն ըրած աղօթքս հիմա նշանակութիւն կը հազնէին: Եւ ահա օր մը արածած ոչխարներս հովուական շուներուն յանձնելով՝ «Մնաք բարով» ըսի լեռներուն ու ձորերուն ու հովի արագութեամբ հեռացայ: Ոչ մէկ ճամբայ կը ճանչնայի: Բայց ինձի խօսողին անտեսանելի ձեռքը կ'առաջնորդէր զիս: Եղեսիա հասայ: Որբանոց ընդունուեցայ: Ժամանակ մը յետոյ Աւետարանի լուսովը ճանչցայ եւ ընդունեցի զԱյն որ օր մը թշնամիներու արիւնոտ եաթաղանէն, ուրիշ օր մը քիւրտերու ծառայութենէն եւ այսօր ալ մեղաց գերութենէն փրկեց զիս: Հիմա կը հասկնամ Սաղմոսերգուին սա խօսքը, ղեղութեան օրը Ինձի կանչէ, ես քեզ պիտի ազատեմ ու Դուն զիս պիտի փառաւորես: Ով Յիսուս, Քեզ կ'օրհնեմ եւ երախտագիտական արցունքներով Քեզ կը փառաւորեմ ինձի ցուցուցած բոլոր ողորմութիւններուդ համար, բայց մանաւանդ այս ձրի եւ մեծ փրկութեան համար:

Քանի մը տարի վերջ Տէրը զիս Ձրանսա առաջնորդեց: Հոս պարագաներու ազդեցութեան տակ հոգեւորապէս տկարացայ: Թող տուի շատ մեղքերու որ զիս զրաւեն: Ծանր խղճահարութեանց մատնուեցայ, եւ փոխանակ Սատանային հակառակ կենալու որ ինձմէ փախչի, ընդհակառակը աւելի անոր տեղի տուի: Եւ այն աստիճան յեղզացայ որ բոլորովին Սատանայի գերիշխանութեան տակ ինկայ: Ո՛հ, որքան դառն բան մըն է Տէրոջը քաղցր ըլլալուն համը առ-

նեւէ վերջ՝ զԱյն լքել եւ երթալ Անառակին պէս խոզերուն կերածովը փորը լեցնել: Ոչ ոք կրնալ երեւակայել այն խոր վիշտը, կսկծանքը եւ անտանելի խղճահարութիւնը զոր եւ կրեցի այս յետադարձ վիճակիս մէջ: Յիշաւի Տէրը որքա՛ն իրաւունք ունի երբ մարգարէին բերնով կը խօսի եւ կ'ըսէ, «Արդ գիտցիր ու տես թէ զէջ ու դառն բան մըն է որ քու Տէր Աստուածդ կը թողուս»: Ո՛հ, Տէրը որքա՛ն բարի է եղեր որ «զիս շատ խրատեց բայց մահուան չմատնեց»: Ընդհակառակը, հոգիս կործանող եւ մարմինս քայքայող այդ մեղսալից վիճակիս մէջ Տէրով փրկարար ձայնը կրկին եւ կրկին ականջիս հնչեց, «Առանց ինծի խաղաղութիւն պիտի չունենաս, ուրեմն միտքդ բեր հիմա ուրկէ որ ինկար եւ ապաշխարէ»: Տեսէք Երեմիայի բերնով յետադարձներու ուղղուած Տէրով հրաւերը որքա՛ն սրտառու է, «Ինծի դարձիր, ով ապստամբ Իսրայէլ, կ'ըսէ Տէրը, Իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թափեր, քանզի ես ողորմած եմ, կ'ըսէ Տէրը, միայն թէ քանզի ես ողորմած եմ, կ'ըսէ Տէրը, միայն թէ քու անօրէնութիւնդ ճանչցիր որ քու Տէր Աստուծո՛ւն է ապստամբեցար»: Ո՛հ, այսքան սիրազեղ հրաւերի մը առջեւ կարելի՞ էր անտարբեր մնալ: Ո՛չ: Կատարեալ զղջումով եւ ապաշխարութեամբ դարձեալ Տէրով յանձնուեցայ: Անոր ոտքը ձգեցի բոլոր մեղքերուս՝ հետ նաեւ յիմարութիւնս, յամառութիւնս եւ կործանարար ընդդիմութիւններս: Տէրը զիս ընդունեց իր խոստման համաձայն, «Ան որ ինծի կուգայ, ԲՆԱԻ դուրս պիտի չհանեմ»: Զիս դարձեալ իր արեամբը լուաց: Դարձեալ իր շնորհքին զերագանց մեծութիւնովը ծածկեց զիս: Ու ես սրտիս մէջ, Ս. Հոգւոյն վկայութիւնովը մեղաց թողութեան եւ փրկութեան վստահութեանը հետ ունիմ նաեւ խորունկ խաղաղութիւն մը, «զոր աշխարհաւէրք բնաւ չեն վայելեր»: Ու հիմա անհուն փառք Անոր որ անցեալին մէջ իմ բարերարս եղաւ, ներկայիս՝ իմ ամենակարող Փրկիչս է եւ ապագային՝ միշտ հաւատարիմ Առաջնորդս պիտի ըլլայ:

Ահա Փրկիչիս ես ուխտ ըրի,

Տէրոջն եմ ես ու իմս է Ան...

Երանելի այն օրն ըսուի

Որ Տէրն մեղքերս ներեց ինծի:

Զեր աղօթքներուն կարօտ հաւատակից եղբայրը

Բ. ԻՆՃԱՌԱՊԵԱՆ



ԵՐԿԻՆԻ ՄԵԿՆՈՂ

ԵՐԿՈՒ ՀԱՄԲՈՐՆԵՐ

Երանելի եմ այն մեղեւնները որ Տէրով մով կը ննջեն. այո, կ'ըսէ Հոգին, որ իրենց աշխատութենէն հանգչին. ու իրենց գործերը իրենց ետեւէն կ'երթան: Յայտ. ԺԴ. 13

Առնցմէ առաջինը Լիոնի մօտ «Փօն տիւ Շէրիւ»ի գաղութէն բնիկ Իսթանուղցի Կղէմէս էմմի Հաճի Ահարոնեանն է: Ծերունի եղբայր մը որ կարճատեւ հիւանդութենէ մը ետք անցեալ աշնան մէջ իր ութսուն տարիքին ննջեց Տէրով մով:

Նա հայրենիքի մէջ Իսթանուղի Հայ. Աւետ. Եկեղեցւոյն սարկաւազն էր: Աքսորութեան առնն իբրեւ արհեստաւոր իր քաղաքը մնացած էր, բայց Քէմալական շարժումէն վերջ Պօլիս փոխադրուեցաւ եւ անկէ ալ քանի մը տարիներ վերջը Ֆրանսա: Իր անկեղծ կեանքովն ու Զերմեռանդ աղօթքներովը տեղւոյս եկեղեցւոյն մէջ օգտակար եղբայր մըն էր: Հակառակ իր բնակարանին հեռաւորութեան, իր այս տարիքին ժողովներուն միշտ ներկայ կ'ըլլար որքան ատեն որ իր առողջութիւնը կը ներէր: Աղօթաժողովներուն ալ իր աղօթքներովը մասնակից կ'ըլլար: Անոր սրտին միակ ցաւը զինքը շրջապատողներուն հոգեւոր վիճակն էր:

Կիրակի օր մը երբ լսեցի թէ Կղէմէս էմմի հիւանդացի է, հետեւեալ առտու զինքը այցելելու գացի եղբօր մը հետ միասին: Երբոր զիս տեսաւ, շատ ուրախացաւ: Խօսակցութեան ընթացքին ըսաւ, «Մեր տարիներուն օրերը եօթնասուն տարի են, ու եթէ զօրութիւնով ութսուն տարի ըլլան, տակաւին անոնց փառքը աշխատանք ու ցաւ է, վասնզի անոնք շուտով կ'անցնին ու մենք կը թռչինք (Սաղ. Դ. 40) եւ պատրաստ եմ մեռնելու: Ես պիտի երթամ որպէսզի զայն ժառանգեմ: Ինծի համար աղօթէ որ Տէրը զիս շուտ իր քովը առնէ»:

Աստուծոյ խօսքէն կարդացի եւ միասին աղօթեցինք: Երբոր պիտի բաժնուէինք, այցելութեանս համար իր շնորհակալութիւնը եւ ուրախութիւնը յայտնեց ու ինծի ըսաւ, «Տէրը քեզ աւելի զօրացնէ որ հոգիներուն օգտակար ըլլաս եւ աչքերուդ լոյսն ալ աւելցնէ»: Սիրելի երէց եղբայր

բօր այս օրհնութեան համար շատ ուրախ եմ. նա իմ հոգեկան եւ ֆիզիքական պէտքերուն համար այս մաղթանքը ըրաւ: Համբուրուեցանք եւ բաժնուեցանք: Ասիկա մեր վերջին տեսակցութիւնը եղաւ այս երկրի վրայ. բայց կը հաւատամ թէ քիչ ժամանակէն վերջը կրկին պիտի միանանք եւ միասին մեր Տէրը պիտի պաշտենք ու մեր խօսակցութիւնը կրկին պիտի շարունակենք:

Իր մահուանէն օր մը առաջ երբ իրեն կը հարցնեն թէ «Բան մը կ'ուզե՞ս», նա կը պատասխանէ, «զԱստուած կ'ուզեմ, Անկէ ի դատ բան մը չեմ ուզեր»:

Կիրակի օր մըն էր որ իր թաղումը կատարուեցաւ: Մեծ բազմութիւն մը ներկայ էր: Զօդուածագիրը Սաղ. Դ. 10ի վրայ խօսեցաւ, նամանաւանդ համարին վերջին մասը շեշտեց, «Շուտով կ'անցնին ու մենք կը թռչինք»: Մեր ակնկալածէն ու երեւակայածէն շուտով կ'անցնին ու մենք կը թռչինք, բայց ո՛ւր, Աստուծոյ աթոռին առջեւ թէ ոչ գոյութիւն:

Երկրորդը՝ Լիոնաբնակ բնիկ Պանտըրմացի Տիկ. Թագուհի Սէլգովանեանն է որ 1937 Մարտ 9ին իր վաթսուն տարեկան մէջ Տէրով հանգիստը մտաւ:

Անոր երկրային ճամբորդութիւնը փոթորկալից եղած է: Պատերազմի ընթացքին ընտանեօք Գոնիա աքսորուած է, ուր իր ամուսինը եւ տասնմէկ տարեկան աղջիկը միեւնոյն շաբթուան մէջ հողին կը յանձնէ: Քանի մը տարիներ ետքը տասնընորս տարեկան աղջիկը եւ ամուսնացած անդրանիկ աղջիկը երեք զաւակներովը եւ ամուսինովը միասին Զմիւռնիոյ արկածին զոհ կ'երթան: 1924ին իր չորս զաւակներէն միակ ողջ մնացած, ամուսնացած աղջկանը հետ Թրանսակովքայ: Հոս ալ երբեմն դժուարութիւններէ անցաւ եւ ի վերջոյ ասկէ հինգ տարի առաջ կաթուածահար եղաւ: Սակայն իր ցաւերը դեռ լման չէին: Քիչ յետոյ փեսան գործարանի մէջ արկածի մը հանդիպեցաւ ու քսան ամիս անկողնոյ ծառայելէ վերջ յաւիտեանականութեան անցաւ: Միայն կարելորդ ու մխիթարական կէտ մը կայ որ այս երկայն եւ ծանր հիւանդութիւնը հանգուցեալին (Փեսային) ապաշխարութեանը միջոց եղաւ: Փառք Տէրովը:

Տիկ. Թագուհի իր նեղութիւնները առանց տրտնջելու կը կրէր: Համբերող եւ լռիկ կեանք մը ունէր: Իր ֆիզիքական տկարութեանը բեր-

մամբ թէպէտ Տէրովը տունէն հեռու էր, բայց հոգիով Տէրովը մօտ էր: Լուրջ կեանք մը ունէր, շատ քիչ կը խօսէր, կարծես թէ աւելի կը սիրէր ունկնդիր ըլլալ քան թէ խօսող:

Մահուանէն ճիշդ քանի մը օր առաջ իրեն հետ տեսակցութիւն մը ունեցայ: Երբ Փրկչին հանդէպ իր յարաբերութեանը մասին հարցուցի, սապէս պատասխանեց, «Անկէ ուրիշ ո՞վ ունիմ, գիշերները երբ արթննամ, յարաբերութիւնս միշտ Անոր հետ է, Անոր աղօթելով կ'անցնեմ»: Կ'երեւի թէ նա մարդոց քիչ կը խօսէր բայց Տէրովը շատ: Եւ շարունակելով յաջորդաբար տեսած երկու երազները, սապէս պատմեց. «Ամիս մը առաջ երազիս մէջ մեծ շէնքի մը մէջ գտնուեցայ որ կը շինուէր: Հոն երիտասարդ մը տեսայ որ քովիններուն ըսաւ, «ասիկա տակաւին ինչո՞ւ չէք փոխադրեր. ուրեմն լաւ» ըսաւ եւ արթնցայ: Քանի մը օր առաջ նորէն երազ մը տեսայ: Երիտասարդ մը զիս նաւակով ծովուն միւս կողմը անցուց եւ ըսաւ, «հոն սանդուխ մը պիտի տեսնես», անկէ վեր ելիր»: Կոնակիս վրայ ծանր բեռ մը կար, սանդուխը դժուարութիւնով գտայ եւ վեր ելայ ու դուռ մը տեսայ: Դրան առջեւ բեռը ձգեցի, սենեակին դուռը բացի ու ներս մտայ: Այն երիտասարդը որ առաջին երազիս մէջ տեսած էի, հոն մէկու մը հետ նստած էր ու ըսաւ. «Ատոր տունը պատրաստ է, թող փոխադրուի»:

Ինք պատրաստ էր եւ մեծ փափաք ունէր մեկնելու: Կարծես թէ այս երազէն ետքը իր յարաբերութիւնը այս աշխարհէն կտրուած էր եւ իր միտքը ու բոլոր էութիւնը անդիւ աշխարհը գրաւած էր: Տեսակցութենէս քանի մը ր վերջը անկողին ինկաւ եւ կ'ըսէր թէ Տէրովը կամքը թող ըլլայ: Իր աղջիկը կը պատմէ թէ երբ բարեկամները իրեն համար բժշկութիւն կը մաղթէին, ինք կ'ըսէր, «Ես երկնային փառքի կ'սպասեմ»: Լեզուն բռնուելէն երկու օր առաջ իր աղջկան այսպէս ըսած է, «Ռօզա, երբոր մեռնիմ, մի լար, սուգ մի ընէր: Շատ կը խնդրեմ որ հաւատքիդ մէջ հաստատ կենաս որպէսզի հոն կրկին միանանք»: Մէկ հատիկ պատանի թոռնիկն ալ կ'օրհնէ եւ այցելուներն ալ: Անկէ յետոյ ութը օր լեզուն բռնուեցաւ: Ոչ կրնար խօսիլ, ոչ ալ լսել, միայն թէ երբեմն «ամէն, ամէն» կ'ըսէ եղեր:

Վերջապէս հասաւ այն ժամը երբ անիկա այս տեսանելիէն փոխադրուեցաւ հոն ուր ակնկառոյց կ'սպասէր երթալ՝ յաւէտ օրհնելու եւ վայելելու զԱյն որ իրեն համար Հօրը տանը մէջ տեղ մը



Ս. ԳՐԱԿԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝ SCOFFIELD էն

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՄԵՐ ՏԵՐ ՅԵՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

oo — oo

Անցեալ թիւերէն միոյն մէջ Քրիստոսի օրինակներու կարգին համառօտաբար սերտեցինք ողջակէզը: Խիստ շահեկան է սերտել նաեւ միւս զոհերն ու ընծաները:

1. Խաղաղութեան գոհը. — (Ղեւտ. Գ. 1): Այս զոհն ալ ողջակէզին նման «Տէրօջը անուշախոյ պատարագ» էր. քանզի ամէն զոհ անուշահոտ չէր Տէրօջը (թէեւ ընդունելի եւ փոխանորդական էր): Անուշահոտ զոհերը կը ներկայացնէին Քրիստոսը Իր սեփական կատարելութիւններուն մէջ, նաեւ չօրը կամքը կատարելու համար Իր սիրալիր անձնանուիրման մէջ: Մինչդեռ ոչ-անուշահոտ զոհերը կը ներկայացնէին Քրիստոսը Իր մեղաւորաց լման անարժանութիւնը կրելուն մէջ: Խաղաղութեան զոհը կը պարունակէր հաւատացեալին խաղաղութեանը տեսակէտէն Քրիստոսի կատարած լման զործը:

Քը մեծ վտանգներու առջեւ նետած ըլլալով քեզ փրկելու համար մինչեւ քու քովդ եկած է, Իրեն յանձնուէ:

Մեղքի խոր վիրաւորման մէջ ինկած ես. խոնարհ Տէրդ հոնկէ քեզ վեր բարձրացնելու համար Իր սիրոյ չուանը քեզի երկարած է, հաւատքով զայն ամուր բռնէ որ ազատութեան ելլես:

Մեռելի մը նման անկենդան, հոգեւորապէս լոկ դիպօք մըն ես: Մեռելները կենդանացնող, ամենակարող կենսատու Արարիչդ, Յիսուս Քրիստոս կարող է Իր միայն մէկ հպումովդ քեզ կենդանացնել:

Ձեռն փափաքիր այս Օրհնեալ, Սիրող, Գթալից Արարիչիդ, Տէրօջդ, Փրկչիդ յանձնուելով աւատիլ մեղքէն: Այս թանկագին առիթը փրկութեանդ համար է, զայն անմիջապէս օգտագործէ քու հոգւոյդ մեծ բարիքին համար:

Բ. Գ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

Երուսաղէմ

Նա խաղաղութիւն ըրաւ Կող. Ա. 20:
Խաղաղութիւն քարոզեց (հռչակեց) Եփ. Բ. 17
Անիկա է մեր խաղաղութիւնը Եփես. Բ. 14
Քրիստոսի մէջ Աստուած եւ մեղաւորը իրարու կը հանդիպին խաղաղութեան մէջ: Աստուած կը զոհացուի եւ մեղաւորը կը հաշտեցուի: Երկուքն ալ կը զոհանան Քրիստոսի կատարած զործով: Բայց բոլոր ասոնք խաղաղութեան Իշխանին արին եւ կրակ արժեց: Անցեալ դարու սուրբերէն մին Տր. Քէյ կ'ըսէ. —

«Ես ձեզի իմ խաղաղութեան ուխտս տուի
Թուոց ԻԵՂԶ:

«Խաղաղութեան իշխանին ձեռամբ զործադրելի Եսայ. Թ. 6:

«Որ Իր անձին մէջ պիտի կրէ ձեր խաղաղութեան պատիժը Եսայ. ԾԳ. 5:

«Ես կ'ազդարարեմ խաղաղութիւն, խաղաղութիւն Եսայ. ԾԷ. 19,

«Բայց ոչ թէ ամբարիշտին համար, քանզի ամբարիշտները խաղաղութիւն պիտի չունենան կ'ըսէ իմ Աստուծոս Եսայ. ԾԷ. 21:

Խաղաղութեան զոհին մանրամասնութիւնները կը խօսին Քրիստոսի միջոցաւ Աստուծոյ հետ ընկերակցութեան մասին: Այսպէս է որ խաղաղութեան զոհը քահանաներուն կերակուր կը հայթայթէ (Ղեւտ. Է. 31-34): Նկատէ թէ երբուք (կուրծք-սէր) եւ զիտը (ուս-գօրութիւն) կերակուրի մեր բաժինը կ'ըլլայ իբր քահանաներ (Ա. Պետ. Բ. 9) չօրը հետ յարաբերելու: Այս է որ խաղաղութեան զոհը մասնաւորապէս շնորհակալութեան զոհ կ'ընէ (Ղեւտ. Է. 11, 2):

Հացի ընծան. — (Ղեւտ. Բ. 1):

Բարակ ալիւրը կը խօսի Քրիստոսի նկարագրին ուղղութեան եւ հաւատարակչութեան վերայ, այն կատարելութիւնը որուն մէջ ոչինչ չափազանց կամ աւելորդ է, եւ ոչ մէկ բան կը պակսի: Կշակը կը խօսի Անոր մինչեւ մահ չարչարանքով փորձուիլը. կնդրուելը՝ Քրիստոսի կեանքին առ Աստուած անուշահոտութիւնը. կնդրուելը նպատակ է շփոթել խոնկին հետ, ասոնք թէեւ իրար կը խառնուէին, բայց երբեմն ալ զատ կը զտրւածուէին: Մեզի ըսուած է խոնկին բաղադրութիւնը, բայց Ս. Գրքին մէջ բնաւ չէ նկարագրուած թէ ինչ էր կնդրուելը: Բոլոր ասոնք Քրիստոսի օրինակներն են: Բաղդատել անուշահոտ համեմունքը (Ելից (Լ. 34) Քրիստոսի մէջ մեր գնահատած կարելիութիւնները, իսկ կնդրուելը Աստուծոյ Քրիստոսի մէջ գնահատած անպատմելի կատարելութիւնը կը ցուցնէ: Խմորին բացակայութիւնը կը ցուցնէ Անոր նկարագիրը

ւի: Իբր Արդարութեան Արեգակ Նա պիտի ցըրէ խաւարը:

4. Ներսի վարագոյրը (Ելից ԻԶ. 31, Մատթ. ԻԶ. 26, Իէ. 50, Եբր. Ժ. 20): Մեր սերտողութեանց այս զուխը վերջացնենք այս վարագոյրով որ կամուրջն է Հին Կտակարանէն Նոր Կտակարանի Քրիստոսին, Օրէնքի շրջանէն Շնորհքի շրջանին անցնելու: Այս վարագոյրին Սրբութիւն Սրբութեանցի մուտքը արգիլելը ամենէն նշանակալի շեշտաւորումն է այն ճշմարտութեան թէ «մարմին մը պիտի չարդարաւայ օրէնքին գործերով» (Հոով. Գ. 20, Եբր. Ժ. 8): Մինչեւ Քրիստոսի մահը այդ վարագոյրէն ներս միայն քահանայապետը կը մտնէր Կօթներորդ ամսուն տաճկերորդ օրը, «Քաւութեան օրը» Ղեւտ. ԺԶ. 29-32, այսինքն տարին միայն մէկ անգամ: Աւագ Ուրբաթի երեկոյեան երբ Քրիստոս խաչին վրայ Իր հոգին աւանդեց (աշխարհի քաւութեան մեծ օրը, երբ Աստուծոյ Գառը մորթուելով աշխարհի մեղքը կը վերցնէր) այս վարագոյրը անտեսանելի ձեռքով մը «վերէն վար երկուքի ճեղքուեցաւ» Մատթ. Իէ. 50, 51: Արդ այս վարագոյրը ըլլալով օրինակը Քրիստոսի մարմինին որ մեզի համար կտրուեցաւ (Ա. Կոր. ԺԱ. 23, 24), Քրիստոսի մահուն վարկեանին վարագոյրին պատուելը կը նշանակէր թէ բոլոր հաւատացեալներուն համար «նոր ու կենդանի ճամբայ մը բացուած էր» Եբր. Ժ. 20, եւ այն ալ այլեւս ոչ մէկ ուրիշ զոհով կամ քահանայապետական միջնորդութեամբ՝ բայց միայն Քրիստոսինով (Եբր. Ժ. 1-8): Ասիկա վախճանն էր այլեւս օրինակաւորութեան: Շատ նշանակալից է նաեւ սա իրողութիւնը թէ Աստուծոյ ճեղքած այս վարագոյրը հրեայ քահանաները կրկին իրարու կարկտած ըլլալու էին քանի որ տաճարին արարողութիւնները Քրիստոսի մահէն յետոյ մօտ 40 տարիներ դեռ շարունակուեցան: Այդ կարկանդակ վարագոյրը «Գաղատիա»ցութիւն է, սուրբերն ու մեղաւորները կրկին օրէնքի տակ դնելու փորձը Գաղ. Ա. 6-9: «Քրիստոսի շնորհքէն» ուրիշ ոեւէ բան «ուրիշ Աւետարան» է, եւ անէմքի տակ է:

ԴՈՒՆ ԿԸ ՀԱՒԱՏԱՎ ՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆ Յովհ. Ժ. 35:


Անոր կը վկայեն բոլոր մարգարէները, թէ ամէն Իրեն հաւատացողները Իր անունովը մեղքերու թողութիւն կ'առնեն:

Գործ. Ժ. 43

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵՍ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ

ՀԱՅՈՑ ՀԱՒԱՏՈՑ ԸՆՏԱՆԻՔԷՆ



ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԿՈՐԻԶ

ԱՐՏԱՇԱՏԻ ԽՈՐ ՎԻՐԱՊԻՆ ՄԷԶ (287-301). — Մահապարտներու գուբին մէջ մնաց Գրիգոր 43 երկա՛ր տարիներ: Բայց քրիստոնէութեան ոխերիմ թշնամիներուն դժխեմ ծրագիրը չյաջողեցաւ, — սովամահ չեղաւ ան: Ազոաւներու միջոցաւ Եղիան կերակրող ամենակարող Աստուծը միջոց մը գտաւ ապրեցնելու Իր այս հաւատարիմ ծառան ալ: Անոր սէրէն մղուած՝ քրիստոնեայ որբեւարի մը ամէն օր իրիկուան մութին գուբը կը նետէր Գրիգորի անհրաժեշտ օրապահիկը: Հաւանաբար նէ կը վայելէր ազդու հովանաւորութիւնը «Հայոց Օրիորդին» Խոսրովի-դուխտի, որ համակիր էր քրիստոնէութեան եւ որու թելադրութեամբ բերդապահ զինուորները աչք կը գոցէին այրիին երթեւեկին:

Եւ այս երկար ժամանակամիջոցը ծառայեցուց Տէրը երկու նպատակներու:

Նախ՝ մահապարտներու գուբը բարձր դպրոց մը եղաւ Գրիգորի համար: Աշխարհահռչակ բանաստեղծ Կէօթէի վկայութեամբ «հանճարը առանձնութեան մէջ կը կազմուի». իրաւ որ նա բոլոր մեծ հոգիներու համար թանկագին պատեհութիւն մըն է ինքնամիոփման, աստուածային տեսիլքի եւ նուիրման: Ուստի ոչ թէ միայն մեր Փրկիչը, հապա նաեւ Աստուծոյ ծառաներէն շատեր իրենց պաշտօնին սկսելէն առաջ ունեցած են իրենց առանձնութեան երկար կամ կարճ շրջանը: Այսպէս՝ Պօղոս առաքեալ Արաբիոյ մէջ երեք տարի առանձնանալով էր որ լաւ եւս պատրաստուեցաւ իր վսեմ պաշտօնին եւ դարձաւ «ընտիր աման մը, Յիսուսի անունը կրելու հեթանոսներու ու թագաւորներու եւ Իսրայէլի որդիներուն առջեւ»:

Նոյնպէս ալ Գրիգոր վերապային ճգնարանին մէջ հեռզհեռէ յղկուեցաւ եւ պատրաստուեցաւ իր երկնատուր ասպարէզին: Նա հոն սքանչելի պատեհութիւնն ունեցաւ հոգւոյ զգայարանքներով յաճախ հաղորդակցելու իր Փրկիչին՝ ճշմարտութեան ու սիրոյ ովկէանոսին հետ եւ Անկէ պատգամներ ընդունելու իր ապագայ գործունէութեան նկատմամբ: Վստահ ենք թէ ճիշդ է ա-

աւանդութիւնը, որու համաձայն անիկա քարի մը վրայ ծնրադրած եւ մտասեւեռ՝ ժամերով կ'ազօթէր ու կը խոկար: Վստահ ենք թէ այդ հաղորդակցութեանց միջոցին Աստուծոյ Հոգին երբեմն կ'այցելէր անոր, կը շնորհէր անոր օրէ օր աւելի փառաւոր լոյս, աւելի կենդանի հաւատք ու աւելի անձնագոհ նուիրում, եւ կ'արժարձէր անոր յոյսը թէ պիտի ցրուի Հայաստանը ճշող հեթանոսութեան թանձր խաւարը, պիտի ծագի արդարութեան արեգակը: Այդ յոյսը կը խրախուսէր զայն տոկալու ամէն տառապանքի եւ ապրելու 13 տարի նոյնիսկ այդ մահարոյր վայրին մէջ:

Երկրորդ՝ այդ տարիները գործածեց Աստուած աւելի եւս հասունցնելու հայ ժողովուրդը քրիստոնէութեան ընդունելութեան համար: Այս յօդուածաշարքին մէջ արդէն յիշած ենք թաղէոս և Բարթողիմէոս առաքեալներու, Սանդուխտ կոյսի, Ս. Ոսկեանց եւ Սուքիասեանց նահատակութիւնը եւ ջանացած ենք ցուցնել թէ այդ սուրբերուն արիւնը եկեղեցւոյ սերմը եղաւ(1):

Բայց այդքանը դեռ բաւական չէր. ուրիշ գոհերու ալ արիւնը թափուելու էր: Ուստի Աստուծոյ իմաստուն տնօրինութեամբ Տրդատի սիրտը կարծրացաւ: Ան ոչ թէ միայն Գրիգորը տանջանքի եւ վիրապային բանտարկութեան դատապարտեց, հապա միեւնոյն ատեն (287) հրամայեց երկու խիստ հրովարտականերով՝ հալածելու բոլոր քրիստոնէականները Հայաստանի ամէն կողմերը: Այդ հալածանաց ատեն զոհուեցան բազմաթիւ հաւատացեալներ: Ասոնցմէ ալ ոմանք — ինչպէս Սուկաւէտի 364 սուրբերը եւ թէոդորոս Սալահունին, — յիշած ենք արդէն(1):

Այժմ հոս ճիշդ տեղն է համառօտաբար պատմել մահը նաեւ ուրիշ խումբ մը մարտիրոսներու, որոնց նահատակութիւնը — տեղի ունեցած Գրիգորի վերապային կեանքի վերջի օրերուն — վերջին լուրջ հարուածը տուաւ խաւարի ուժերուն, խորտակեց անոնց գէթ արտաքին զիմադրութիւնը քրիստոնէութեան դէմ, զայն դուրս հանեց «զրուանի տակէն» եւ բարձրացուց «աշտանակի վրայ»: Այդ մարտիրոսներն են

Հռիփսիմեան կոյսերը. — Ասոնց ծագումը անստոյգ է: Ազգային նախկին աւանդութեան համաձայն անոնք Հոռովմայեցի էին եւ Հռիփսիմէն կայսերական տոհմէն: Քաշուած Հոռովմէն — աշխարհի փարթամ ու շքեղ, բայց միեւնոյն ատեն շուայտ ու անարարոյիկ մայրաքաղաքէն —

առանձնացած էին անոր մէկ անկիւնը, կուսանոցի մը մէջ եւ կ'ապրէին սուրբ, աստուածահաճոյ եւ քրիստոնէական զթոյ գործերով ճոխ կեանք մը: Բայց յանկարծ կը վրդովուի իրենց խաղաղութիւնը. հոռովմէական աշխարհածաւալ պետութեան հզօր կայսրը, Դիոկղետիանոս կ'ողջ փեսայանալ հոգւոյ ու մարմնոյ զմայլելի զեղեցկութեամբ օժտուած Հռիփսիմէի: Իմանալով կայսրին այդ դիտաւորութիւնը, կուսանոցի մայրը — առաքինազարդ ու հեռատես Գայրանէն — կ'առնէ Հռիփսիմէն եւ ուրիշ վստահութեամբ կոյսեր ու ամէնք միասին (70 հոգի) ծածուկ կը հեռանան Հոռովմէն: Աղեքսանդրիոյ, Երւսաղէմի եւ Եդեսիոյ վրայով ճամբորդելով՝ վերջապէս կը հասնին Հայաստան, ուր ատեն մը հոս ու հոն պտուտելէն հոք անոնցմէ 37 հատը կը հաստատուին Վաղարշապատի մօտակայ հնձաններուն մէջ:

Ահա՛ այսպէս կ'աւանդեն մեզի Ազաթանդեղոս եւ Մովսէս Խորենացի Հռիփսիմեանց ծագման մասին: Այսպէս կ'ընդունի ի. դարու բանաստեղծ կաթողիկոսը կոմիտաս: Այսպէս հաւատացած է նաեւ հայ ժողովուրդը իր մեծամասնութեամբ:

Թէեւ զգացումներու դէմ է՝ դպչելի նոյնիսկ մէկ աննշան կէտին այդ ազգային աւանդութեան, որ պատկառելի հնութիւն մը ունի, այսուհանդերձ կը մղուինք կասկածիլ անոր ստուգութեանը: Եւ հետեւեալ պատճառներով. —

Նախ՝ Հռիփսիմեանց մասին ականարկ մը իսկ գոյութիւն չունի աւանդութիւններուն մէջ Հոռովմի եկեղեցւոյն, որ այդ ժամանակ քրիստոնէայ ամենէն ազդեցիկ համայնքներէն մին էր եւ որ մեծ նախանձախնդրութեամբ հաւաքած ու պահած է իր սուրբերու մասին պատմութեանը: Եթէ Հռիփսիմեանց նախկին բնակավայրը Հոռովմի մէջ եղած ըլլար, 70 կոյսերու փախուստը անկէ՝ տեղւոյն եկեղեցիին խօսակցութեան կարեւոր նիւթերէն մին պիտի դառնար եւ մեզի անոնց մասին գէթ ազօտ յիշատակ մը պահաւած պիտի մնար անոր աւանդութիւններուն մէջ:

Երկրորդ՝ այն ժամանակի քաղաքական ու աշխարհագրական պայմաններն ալ կը հերքեն այդ աւանդութեան ճշդութիւնը: Թէեւ Դիոկղետիանոս էր Հոռովմէական կայսրութեան բարձրագոյն վահագար, բայց նա Արեւմուտքի վարչութիւնը լայն իրաւասութիւններով յանձնած էր երկու օգնական կայսրերու, որոնք քրիստոնէից հանդէպ թուրատու քաղաքականութեան մը կը հետեւէին, իսկ ինքը՝ իրեն մայրաքաղաք ունեւնալով Նիկոմիդեան, ուրիշ օգնական կայսրի մը հետ կ'իշխէր Արեւելքի վրայ: Եւ երկուքն ա-

(1) Տես «Բանբեր» Մարտ եւ Ապրիլ 1937

կատարի հակառակորդ էին քրիստոնէութեան ու կը ջանային ջնջել զայն: Մեր Տրդատն ալ աւելի անոնցմէ աղբււած՝ կը հալածէր քրիստոնէաները:

Ուստի եթէ Դիոկղետիանոսի ձեռքէն ազատիլ էր Հռիփսիմեանց նպատակը, ինչո՞ւ պիտի լքէին աւելի ապահով Արեւմուտքը: Եթէ նոյնիսկ ըստիպուած էին փախչիլ Հռովմէն, ինչո՞ւ չնախընտրեցին թագստոց մը փնտռել մօտակայ Գաղիոյ մէջ, ուր Կոստանդինոս Կլօրոսի իշխանութեան տակ քրիստոնէաները բաւական խաղաղ կեանք մը կ'ապրէին: Ինչո՞ւ զայն Արեւելք եւ ինչպէս կրցան հոն ուղղակի գիրենք փնտռող Դիոկղետիանոսի իշխանութեան սահմաններուն մէջ այնքան երկար ճամբորդել. ան ալ այնպիսի ժամանակի մը մէջ, երբ գրեթէ բոլորովին անկարելի էր որ «70 կոյսերու բազմութիւն մը կրնար ապահովութեամբ այդչափ ընդարձակ ու դարձուգարձ ուղեւորութիւն մը կատարել»⁽¹⁾:

Երբորդ՝ երբ Դիոկղետիանոս հալածանաց հըրովարտակը հրատարակեց (303), ունէր իր կինը եւ բաւական տարիքոտ աղջիկ մը «որոնք քրիստոնէութեան կը միտէին եւ բռնադատուեցան զոհել» կուռքերու (2): Աս կը նշանակէ թէ կայսրը Հռիփսիմեանց կարծեցեալ փախուստէն շատ առաջ արդէն ամուսնացած էր, ուստի չէր կարող Հռիփսիմէն ալ առնել իբր երկրորդ կին մը: Հռովմէական բարքերը չէին թուլատրեր որ իրենց կայսրերը արեւելեան վեհապետներու նման շարժւապահէին:

Եթէ այս երեք դժուարութիւնները միասին նկատի առնենք, պիտի համոզուինք թէ Հռիփսիմեանք Հռովմէն եկած փախստականներ չէին, հետեւաբար անոնց ծագման մասին մեզի հասած ազգային աւանդութիւնը հաստատուն հիմ մը չունի:

Այսուհանդերձ ասով չենք կրնար ուրանալ նաեւ անոնց գոյութիւնը: Ընդհակառակը, խորապէս համոզուած ենք թէ անոնք ապրած են եւ մարտիրոսացած Քրիստոսի սիրոյն համար, եւ այս է կարեւոր կէտը այս աւանդութեան մէջ: Համոզուած ենք նաեւ թէ հետեւեալն է իրենց կեանքի եւ նահատակութեան համոռօտ պատմութիւնը.—

Ոչ թէ Հռովմէացի, հապա «Հայազգի կոյսեր» էին անոնք եւ հաւանաբար «Հոգւոց վանքէն» որ գոյութիւն ունէր բաւական հին ժամանակներէ ի վեր: Կ'երեւնայ թէ Տրդատի յարուցած հալածանքները պատճառ եղան որ վանքը գոցուի եւ կոյսերը թափառական դառնան: Գրիգորի վերապալին կեանքի վերջին ամիսներուն գիրենք կը գտնենք Հայոց մայրաքաղաքի՝ Վաղարշապատի մերձակայ այգիներուն հնձանիւրուն մէջ: Իրենց ապրուստը կը հայթայթէին իրենցմէ ոմանց շինած ապակեղէն ուլունքներով: Կը վարէին կեանք մը՝ լի ֆիզիքական ու նիւթական զրկանքներով, բայց ճոխ բոցավառ հաւատքով ու անձնուէր սիրով: Կը ջանային խօսքով ու առաքինազարդ գործերով հեթանոս սրտեր հրապուրել կենդանի Աստուծոյ ու Անոր էակից Որդւոյն:

Բայց երկար չտեւեց եւ հա՛ հայոց թագաւորին հասաւ անոնց ներկայութեան լուրը եւ Հռիփսիմէի անմասն գեղեցկութեան համբաւը: Պատգամաւորներ զրկուեցան զայն պատուով պալատ առաջնորդելու: Նէ չհաճեցաւ, ուստի բռնութեամբ տարուեցաւ: Տրդատ հրապուրուած անոր մարմնոյ եւ հոգւոյ գմայլելի շնորհներէն, ջանաց համոզել զայն դառնալ թագուհին հայոց աշխարհի: Բայց ի գո՛ւր: Հռիփսիմէի սիրտը գրաւուած էր արդէն երկնաւոր Փեսային սիրովը: Ուստի անոր համար աւելի հրապուրիչ էր անշուք հնձանը քան քէ հեթանոս թագաւորին ապարանքը. եւ աւելի առիթնող՝ մարտիրոսութեան պսակը, քան թէ արքայական ադամանդակուռ թագը: Թագաւորը յուսահատ՝ պալատ կանչեց կոյսերու մեծաւորուհին, Գայիանէն, ու թելադրեց անոր անձնատուութեան յորդորելու իր սանուհին: Բայց նէ ընդհակառակը քաջալերեց Հռիփսիմէն դիմադրելու: Պալատականները զայրացած՝ Գայիանէի ակօսները կոտորեցին ու վռնտեցին թագաւորին ներկայութենէն:

Տրդատը առանձինն շարունակեց իր յորդորները, աղաչանքները, հրապուրիչ խոստումները եւ սպառնալիքները: Անօգուտ: Հռիփսիմէի սիրտը անզոյն աղամանդ մըն էր ունէ անպարկեշտ եւ ամբարիշտ լեզուի կողմէ: Բարոյական այս պարտութիւնը դառնօրէն վիրաւորեց անյաղթելի նկատուած առիւծ սիրտը: Եւ երբ ամօթահար ու զլխիկոր՝ ոճրապարտ մտածութիւններու մէջ էր խորասուզուած, Հռիփսիմէ... բացաւ յանկարծ փորձութեան սենեակին դուռը եւ դուրս խոյացաւ... կտրեց ամբոխը եւ վազեց հեւ ի հեւ դէպի հնձանները»:

(1) Օրմանեան, Ազգապատմ. Ա. էջ 81

(2) F. Oehninger, Geschichte des Christentums, էջ

Հայարտ արքային զայրոյթը իր գազաթնակէտին բարձրացած էր. զրկեց դահիճները, որոնք բռնեցին Հոփսիմէն, ձեռքերն ու ոտքերը չորս ցիցերու կապեցին եւ ջահերու բոցերով խորովեցին անոր մարմինը՝ զոչելով, «Այսպէս պիտի կորսուին բոլոր անոնք որ կը համարձակին արհամարհել թագաւորին հրամանները»: Յետոյ նոյն օրը սրով կոտորեցին անոր 33 ընկերուհիները, չխնայելով նոյնիսկ այն մէկին, որ հիւանդ էր: Յաջորդ օրը բռնեցին Գայիանէն ալ. նախ լեզուն կտրեցին, որ «կորստաբեր խրատներ» տուած էր Հոփսիմէն. ապա զինք եւ իր երկու ընկերուհիները պրկեցին չորսական ցիցերու եւ սոսկալի տանջանքներու ենթարկելէ ետքը երեքն ալ գլխատեցին:

37 սուրբերուն ալ մարմինները նետուեցան բաց դաշտին մէջ, որպէսզի կեր դառնան քաղաքի շուներուն, երկրի գազաններուն և երկինքի թռչուններուն: «Այս էր մարդոց խորհուրդը, բայց այլ՝ Աստուծոյ տնօրէնութիւնը, ինչպէս վերջը պիտի տեսնենք, անոնք թաղուեցան «յաւիտեանական յիշատակով անմահացած հանգստարաններու մէջ»:

Իսկ անոնց արիւնը տեղաց մեր չքնաղ հայրենիքին մէջ իբր ամենապաշտօնէր անձրեւ: Ուրիշ սուրբերու մարտիրոսացման միջոցաւ արդէն կազուեցած էին եւ պատրաստ հողի վերածուած՝ շատ մը խոպան ու քար սրտեր՝ ընդունելու յաւիտեանական սերմը: Եւ «մանանխի հատիկը» արդէն ծլած էր Հայաստանի մէջ: Այժմ Հոփսիմէն 37 կոյսերու արիւնը անգամ մըն ալ ոռոգեց զայն, որ շուտով բարձրացաւ, ճիւղերը տարածեց ու իր հովանիին տակ առաւ հայ ժողովուրդն ու թագաւորը:

Այս մասը յաջորդիւ:

Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ

ՊԱՏԱՆԵԱՑ

ԵՐԵՒ ԿԱՐԵՒՈՐ ԴԱՍԵՐ

(Իրական կեանքէ)

Գիշեր էր: Տօք. Հիւմըր լուրթեամբ եւ թախծով կը հսկէր իր հիւանդ դստեր սնարին մօտ: Աղջիկը շատ դժուարաւ շունչ կ'առնէր: Հայրը որպէս բժիշկ լաւ գիտէր թէ վերջին շունչը շատ հեռու էր:

Յանկարծ տան դուռը գարնուեցաւ բժիշկը կը լսէր թէ ինչ ճարտար եւ համողիչ խօսքերով

սպասուհին ետ կը զրկէր դուռը բաղխողը: Մէկ վայրկեան յետոյ դուռը զոցուեցաւ եւ սպասուհին ներս կը մտնէր ըսելով, «Դուռը դորձաւոր մը եկած եւ թախանձանքով կը խնդրէր որ բժիշկը գայ իր ծանրապէս հիւանդ եղող կնոջ նայելու, քանզի զրեթէ անյոյս վիճակի մը մէջն էր: Ես իրեն ըսի որ բժիշկը չէր կրնար դուրս ելլել, քանզի ան ալ իր գաւկին մահուան անկողինն առջև կը հսկէր, անոր աչքերը փակելու»: Նորէն ամէն ինչ լռեց: Միայն հօրը աչքերէն արցունքի երկու կայլակներ լոին կը հոսէին երեսն ի վար...

Նորէն դրան գանգակը հնչեց:

«Մարդը նորէն եկած է» քրթմնեց սպասուհին, «գացած փնտռած, փնտռած, բայց բժիշկ մը գտած չէ եւ կը խնդրէ որ բժիշկը գայ եւ հինգ զաւակներու մայրը ազատէ, քանզի եթէ անմիջական օգնութիւն չհասնէր, իր կինը պիտի մեռնէր»:

Բժիշկը իր աղջկան անկողնոյն վրայ ծռելով իր զլուխը՝ սկսաւ տւելի տրտմիլ:

Յանկարծ աղջիկը աչքերը բացաւ եւ զոգողուն ձայնով մ'ըսաւ, «Հայր, հիւանդ մը քեզի պէտք ունի, գնա անմիջապէս, արդէն ամէն բան խօսեցանք, մօտ առնենք նորէն կը տեսնուինք»:

Բժիշկը խորապէս ազդուած համբուրեց իր սիրտսուն զաւակը եւ իր անհրաժեշտ բժշկական գործիքները հաւաքելով գիշերուան մութին դուրս ելաւ տունէն, խեղճ եւ հիւանդ կնոջ մը օգնութեան փութալու:

Բաւական ժամանակ անցած էր: Երբ բժիշկը տուն վերադարձաւ, աղջիկը արդէն մեռած էր: Անոր թաղումէն չորս շաբաթ յետոյ բժիշկն ալ գերեզման գրուեցաւ: Այն գիշեր իր ձերբունի եւ տկար մարմինը դիմացած չէր գիշերուան ցուրտին եւ անոր վերջին հարուածով զգեստնուած էր: Յուզարկաւորութեան օրը երբ բազմութիւնը այլ եւս տուն կը վերադառնար, աննշմար անկիւնէ մը տօգոյն կին մ'ը երեւցաւ որ բռնած էր հինգ զաւակներուն ձեռքէն եւ պզտիկ մըն ալ գիրկը, ամէն մէկուն ձեռքին մէջ փունջ մը դաշտի ծաղիկ, կը մօտենային նոր գերեզմանին:

—Անպայման ձեր շատ սիրելի ազգականը ըլլալու է տօքթորը, բացազանչեց մեռելաթաղը կնոջ:

—Ո՛չ. պարոն, ազգականս չէր, բայց անկէ աւելի. անիկա այս վեց մահուկներուն եւ իրենց մօրը ազատիչն է: Միշտ երախտապարտ պիտի մնանք անոր եւ իր անունը թարմ պիտի մնայ մեր միտքերուն մէջ:

Պատմութիւնս լմնցաւ, սիրելի տղաս, բայց անոր մէջ երեք կարեւոր դասեր կան, զորոնք կրնաս սորվիլ եւ որոնք կեանքիդ բոլոր օրերուն մէջ կրնան քեզի օգտակար ըլլալ: Այս երեք դասերը երեք անձերէ կը սորվինք: Բժիշկին աղջիկէն, բժիշկէն եւ հիւանդ կնոջմէն: Բժիշկին աղջիկը վարժուած էր գոհաբերութեան: Անիկա տեսնելով իր հօրը ծառայող բարի սիրտը, վարժուած ըլլալով Աստուածապաշտութեան գեղեցիկ դպրոցին մէջ, սորված էր իր եղբայրը իր անձին պէս սիրել, նաեւ սորված էր Տէր Յիսուսի պէս սիրել մարդիկը, նոյնիսկ իր շահերը, իր հանգիստը, իր վերջին վարկեաններն ալ զոհելով ուրիշին սիրոյն:

Չեզմէ ոմանք գիտեն գոհաբերել, բայց ո՞րքան կրնան զոհել. շաքա՞ր մը, մատի՞տ մը, զի՞րք մը, կէսօրուան կերակո՞ւր մը, իրենց գանձանակէն պզտիկ դրամ մը, սիրոյ ժպի՞տ մը իրենց եղբոր երջանկութեան համար. ո՞րչափ կրնան զոհել: Պօղոս առաքեալ կ'ըսէ «Դուք գիտէք մեր Տէր Յիսուս Քրիստոսի շնորհքը, թէ Ինք ձեզի համար աղքատ եղաւ՝ Ան որ հարուստ էր, որպէսզի դուք Ասոր աղքատանալովը հարստանաք» (Բ. Կոր. Ը. 9): Զոհաբերութիւն մինչեւ մեր աղքատանալը... մինչեւ որ ուրիշներ հարստանան:

Երկրորդ դասը զոր կը սորվինք, բժիշկէն է: Անիկա իբր բժիշկ ուխտ ըրած էր իր բժշկական կաճառին առջեւ երթալու ամենուն եւ ամէն տե՛սն, տարբերութիւն չգնելու ո՛չ աղքատի եւ ո՛չ հարուստի միջեւ, ո՛չ գիշերուան եւ ո՛չ ցօրեկի միջեւ: Ուխտ ըրած էր Աստուծոյ առջեւ ալ ծառայելու որքան ատեն որ Տէրը իրեն կարողութիւն տայ: Անիկա այս ուխտին հաւատարիմ եղաւ: Պարտականութեան գիտակից էր: Կը սիրէր իր զուտորը, շատ կը սիրէր զայն, բայց նաեւ ուրիշ պարտականութիւն մը գինքը կը կանչէր, մէկը զոհել պէտք էր: Իր աղջիկը գինքն ազատ արձակեց առաջին պարտականութենէն ու ըսաւ որ երթայ. կը մնար երկրորդ պարտականութիւնը, զոր կատարելու ատեն իր կեանքն ալ վրայ տուաւ, բայց տուաւ սիրով եւ հնազանդութեամբ վերին կոչումին, քանզի անիկա բժիշկ մը ըլլալէ առաջ Աստուծոյ սիրելի մէկ ծառան էր:

Շատ եղած են այսպիսի պատմական մարդիկ, որոնք իրենց կեանքը չսիրեցին մինչեւ ի մահ եւ տուին ուրիշներու, զանոնք ազատելու նպատակաւ: Անոնք հաւատարիմ եղան իրենց ուխտին: «Մինչեւ ի մահ հաւատարիմ եղիր, ու քեզի կենաց պսակը պիտի տամ»:

Երրորդ դասն ալ գեղեցիկ դաս մըն է զոր

կը սորվինք բժշկուած կնոջմէն: Այս կինը երախտագէտ կին մըն էր, կրնար իր մտքին մէջ ըսել թէ, «Ա՛հ, ի՛նչ պէտք է բժիշկին վրայ մըտածելու, անիկա իր պարտականութիւնը կատարեց, թող բժիշկ չըլլար, բժիշկ ըլլալով պարտական է միշտ ծառայելու, ձրի ալ չըներ, այսքան հարուստ եւ հանգստաւէտ կեանք մը ապրած է ուրիշները կեղեքած ըլլալով»: Բժիշկներու մասին այսպէս խորհողներ շատ կան, ու թերեւ իրաւունքով ոմանց համար: Բայց այս կինը այդպէս չխորհեցաւ, հապա տեսաւ բժիշկին գոհողութիւնը, ծառայութեան սէրը եւ նաեւ այդ սիրոյ պարտականութեան պատնէշին վրայ անոր դիտապաստ անկումը: Երախտապարտ էրնէ, ու իր երախտագիտութիւնը ցոյց կուտար բժիշկին գերեզմանին առջեւ՝ զարգարելով զայն քանի մը դաշտի ծաղիկներով:

Սիրելի զաւակ, երախտագիտութիւնը սորված ես: Շատ գեղեցիկ յատկութիւն մըն է այն: Կ'արժէ զայն մշակել եւ անոր մէջ յառաջդիմութիւն ցոյց տալ: «Շնորհակալութիւն մատուցանողը զիս կը փառաւորէ» կ'ըսէ Տէրը: Երախտագիտութիւն ցոյց տալու ենք մեր բարեկամներուն, մեր մեծերուն, ամենամեծը մեր ծնողաց եւ Քրիստոսի, որ իր անձը մեզի համար տուաւ որպէսզի մենք ապրինք: Եթէ մարդիկ Յիսուսը Ս. Գրքին մէջ չտեսնեն, ատիկա իրենց յանցանքն է, իսկ եթէ քու եւ իմ կեանքիս մէջ չտեսնեն, մերն է յանցանքը: Տէրը օգնէ քեզի այս երեք առաքինութիւնները մշակելու կեանքիդ մէջ: Զ. Ն. Ղ.

Շալ. Խմբագրականի

եւ ազօթք խնդրէ: Աստուած ծաղր չըլլար: Ան որ հոգեւոր է, ամէն բան կը քննէ:

Վկայութեան օրհնութիւնը.— Վկայութեան շահերը մեծ են: Քրիստոնեան իր վկայութեամբը կը հաստատէ թէ Աստուծոյ խօսքը ո՛չ թէ մեռած տառերէ կազմուած պատմական գիրք մը կամ կանոնադրութիւն մըն է ձանձրալի եւ յոգնեցուցիչ, այլ կենդանի ու կենդանացուցիչ, փրկարար եւ սրբացուցիչ խօսք: Աստուծոյ խօսքը մեզ Քրիստոսի կ'առաջնորդէ, եւ Քրիստոս կենդանի Փրկիչն է այն ամենուն, որոնք Աստուծոյ խօսքին հաւատալով իրեն կը դիմեն: Մեր վկայութեամբ Աստուծոյ խօսքը իր արժէքը կը պահէ մարդոց մէջ:

Մեր վկայութեամբ ուրիշներ կ'օրհնուին: Մեղաւորներ կը յանդիմանուին եւ կը քննուին, անոնց սրտին ծածուկ բաները յայտնի կ'ըլլան,

ԵՐԳ ՄԵԾԵՐՈՒ ՀԱՄԱՐ ԵՒ ՊԱՏԱՆԵԱՑ ՅԱՐՄԱՐ


ՉԱՅՆ ՈՒՆԻՄ

հետեւաբար անոնք երեսի վրայ ինկած Աստուծոյ երկըրպագութիւն պիտի ընեն, եւ խոստովանին թէ իրաւցնէ Աստուած մեր մէջն է (կարգալ Ա. Կոր. ԺԴ.). նաեւ Աստուծոյ զաւակներ կը քաջալերուին ու կը զօրանան, անոնց բերաններն ալ կը բացուին եւ Աւետարանի լոյսը մինչեւ մութ անկիւններ կը թափանցէ զանազան հաւատացեալներու ձեռքով: Վրկայութեամբ կրակը աւելի կը հրավառուի հաւատացելոց մէջ:

Մեր վկայութեամբ մենք անձամբ կ'օրհնուինք: Բրիստոսի առջեւ վկայութիւն տուողը սանձ կը դնէ իր հակումներուն ու ներքին մեղանչողական բնութեան վրայ, զանիկա ճնշելով ու նուաճելով: Վկայութիւնը յաղթողութիւն է. վկայողը աւելի զիւրութեամբ կը յաղթէ: Ս. Հոգին որ այդ վկայութեան զօրութիւնը պարզեւած է, պիտի պարզեւէ նաեւ յաղթութեան զօրութիւնը: Աստուծոյ եկեղեցիին պատմութիւնը մեզի ցոյց տուած է թէ բոլոր յաղթականները վկաներ եղած են: Վկայողներ յաղթութենէ աւելի յաղթութիւն գացած են, կեանքէ աւելի կեանքի:

Ուրեմն ամօթ չսեպենք վկայելը, քանի որ անոր մէջ այսքան օրհնութիւններ կան, այդ օրհնութիւններէն չզրկուինք եւ չզրկենք ուրիշներ ալ: Ան որ չվկայէր, անշուշտ բան մը ունի: Թե՛րեւս զազտնի մեղք մը կայ որ արգելք կ'ըլլայ իրեն բերանը բանալու: Քանզի անբնական է որ իրենց բերանը ժամերով գոցել չգիտցող եւ ամէն նիւթի վրայ հեղինակօրէն խօսող մարդիկ եւ կիներ աղօթքի եւ վկայութեան ատեն լուռ մնան: Կայ բան մը որ ի յայտ գալու է: Եթէ մեղք չէ, ծուլութիւնը կամ անհասկացողութիւնն է, կամ տղիտութիւնը: Ուրեմն ինքզինքնիստ քննութեան առնելու եւ լուսաւորուելու ենք, շիտակ դիտելու ենք խնդիրները, ուղիղ ըլլալու է մեր դիրքը Աստուածային ճշմարտութեանց հանդէպ:

Վկայենք խոնարհութեամբ, աւելի խոնարհելու համար, վկայենք սիրով, աւելի սիրելու հա-



- 1 ՉԱյն ունիմ, ի՞նչ մեծ ցընծում
Անճառ, անպատում:
Այ վըստահ եմ Անոր սուրբ ձեռան
Թէ որ քալեմ ձորն մահուան,
Ինքն է պաշտպան կեանքիս,
Ազատեց, կը սիրէ, պիտ' փրկէ զիս:
- 2 Կ'պատեմ իր զալստեան,
Տէրոջս գերբնական
Յայտնութեան — երբ ամպեր փարատին
Եւ տեսնեմ փառքն Իմ Փրկչին,
Ո՛հ, յայնժամ իմ բերան
Ի՞նչ ուրախ երգեր երգէ զովութեան:
- 3 Ես պիտի վեր բարձրանամ
Իր ներկայութեան,
Յաղթական խումբին հետ Անդրանկաց
Սուրբերուն եւ երիցանց:
Ուրքա՛ն է փառաւոր
Մեծ Ժողովն արդարոց հանդիսաւոր:
- 4 Հոն իյնամ ես ապաքէն
Եւ երկրպագեմ.
Փառք պատիւ Անոր մատուցանեմ
Հոնով. «Տէր, Ես ո՞վ եմ,
Չեմ արժան եւ ոչ բաւ,
Ա՛խ, ձերի շնորհքդ զիս հոս բերաւ»:

մար, վկայենք Ս. Հոգիին զօրութեամբը, աւելի զօրութիւն հազնելու համար: Վկայենք մեր թագաւորին համար, որ Անիկա «Ամէն» ըլլայ ամէն բանի մէջ:

Մենք այս բանքը վկաներն ենք: Յ. Ն. Դ.

ԱՅԱԿԵՏ. ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊԱՇՏԱՄՈՒՆՔՆԵՐ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

(Շարանամիջի աղօթածողովներու մասին հարցնել տեղոյն վրայ):

ՄԱՐՍԷՆ - Հովիտ (վեր.) Յ. Ն. Վազարսեան
7 Rue Papère.

Կիր. ժամը 10 քարոզածողով, 2 ր. Philippe de
» 11.30 ին աղօթածողով, Girard
Կիր. դասեր մանկանց ժամը 8. 30ին նոյն տեղը
Սէն ժակիէն. Լէզ Օլիվ, Ս. Ժէրոմ Ս. Ան-
ժուան եկեղեցւոյ աղօթատեղիին մէջ
Ս. Միք. Ալ մասնաւոր ընտկարաններու մէջ
Շարանամիջի աղօթածողովներ

Գ. շր. ժամը 14ին Սէն Ժակիէն
Գ. շր. 20ին քաղաքը 2 ր. Philippe de Girard
Ե. շր. ժամը 2ին Ս. Միք
Ե. շր. ժամը 19ին Սէն Ժէրոմ
Ուր. ժամը 2ին Սէն Սէն Սէն

ՍԷՆ ԼՈՒՆ.—Քարոզիչ Պատ. Վաֆան Սաֆակեան
Chapelle Evang. Armen. Bd. Escalon St. Loup
Կիր. ժամը 8 30ին մանկանց Կիր. դաս:
10. 30ին Ս. Գրական ուսումնա.
15 30 ին քարոզածողով:

ՍԷՆ Թ ՄԱՐԿԻՐԻԹ.—
Կիր. ժամը 14ին քարոզածողով

ՍԷՆ ԼՈՒԻ—Քարոզիչ Պատ. Ս. Պազգալեան
11 Impasse des Muriers St. Luis
Կիր. ժամը 9ին Կիր. դպրոց
ժ. 10ին աղօթածողով, ժ. 14.30ին քարոզ
Գ. շր. ժամը 20ին Ասեւ. ժողով
Ուր. ժամը 20ին սկսողութիւն

ԼԱ ՍԻՌԵԱ.— Կիր. ժամը 9.30ին աղօթածողով
15 ին քարոզածողով,
մանկանց կիրակնօրեայ դաս նոյն տեղը

ԲՕՆՏ ՕՊԷՆԱՍ—Հովիտ վեր. Ա. Փափազեան
Pont-d'Aubenas, (Ardèche)

Կիր. ժամը 8. 30 մանկանց Կիրակ. դաս
10. 15 քարոզածողով
18. 30 աղօթածողով

ՍԷՆ ՓԻԷԻ.—
Կիր. ժամը 10ին մանկանց Կիր. դպրոց:
16. 30 ին քարոզածողով եւ
աղօթածողով

ՄՕՆԹԵՆԻՄԱՐ.—
Կիր. ժամը 13ին մանկանց Կիր. դպրոց
14ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԱԼԱՆՍ.—Հովիտ Բրօի. Գ. Գ. Խայիկեան
1 r. du Colombier Valence (Drôme)
Կիր. ժամը 13ին քարոզածողով Ֆրանս.
եկեղեցիին մէջ

ՌՕՄԱՆ.—

Կիր. քարոզածողով:

ԼԻՕՆ—Հովիտ վեր. Ժ. Պարտաբեան,
18, Rue du Dr. Rebâtel
Կիր. ժամը 9. 45ին քարոզածողով
23 Rue le Royer
11ին աղօթածողով նոյն տեղը:

15 ին երիտասարդներու եւ երիտասարդու.
հինկրու ժողով ամսուն երկրորդ եւ չոր.
րորդ կիրակիներուն, նոյն տեղը:

ՏԷՍԻՆ.—

Կիր. ժամը 13. 45ին քարոզածողով,
15ին աղօթածողով: Rue Wilson.

ՍԷՆ ՄՕՐԻՍ

Կիր. ժամը 10ին քարոզ եւ աղօթածողով:

ՎԻԷՆ.—

Կիր. ժամը 15ին քարոզածողով
Rue Lafayette.

ՓՕՆ ՏՐ ՇԷՐԻԻ.—

Կիր. քարոզածողով եւ աղօթածողով
(15 օրը անգամ մը):

ՍԷՆ ԷԺԻԷՆ—Քարոզիչ Պատ Ի. Արրահամեան
60 Rue Richelandière
Կիր ժամը 10. 30ին քարոզածողով
51 Rue de la République
17ին աղօթածողով
Արմէ տիւ Սալիւի սրահին մէջ

ՍԷՆ ՇԱՄՕՆ.—

Կիր. ժամը 14ին քարոզածողով
Mairieի մէջ, Justice de la Paix սրահը

ԲԱՐԻՋ—Հովիտ Պատ. Զ. Բ. Պատարեան,
10 bis Villa de la Gare, Vanves (Seine)

Կիր. ժամը 10 30ին քարոզածողով
11 Rue Jean Bart Ա. Երկ Met Rennes
Ամալյոն Ա. կիրակին ժամը 16. ին Ե. Ք. Ը. Բա-
նալոն. Թիւն: Ամալյոն Գ. Կիր. ժ. 16ին Ս. Ք. Ը.
37 Rue Tournesfort Paris 5 Metro Moulie
Կիր, ժամը 20. 30ին աղօթածողով
ժամը 10ին կիրակնօրեայ դաս
59 Ave. du Bas Meudon Ile St Germain
Issy les Moulinaux

ԱԼՖՕՐՎԻԼ.—Քարոզիչ Պատ. Մ. Վէքիլեան
22ter Rue de Vitry Alfortville
Կիր. ժամը 9ին Կիր. դպրոց
Կիր. ժամը 10ին պաշտամունք
Rue des Brochets, Alfortville
Երկու Կիր. անգամ մը 7.30ին երիւ. խառն ժողով



ՄՈՒՑԻ.— Ուրախութեամբ կը ծանուցանենք թէ Մուտիին կենսագրութիւնը աննախընթաց ընդունելութիւն մը գտաւ: Անոնք որ կարգացին, չէին կրնար իրենց գնահատանքները զլանալ այս գրքոյկին համար: Ոչ այնքան կարճ, ոչ ալ յոգնեցուցիչ ըլլալու ատիճառն երկայն է զիր- քը, բայց Մուտիի կեանքին ամենէն էական կէ- տերը արձանագրուած են:

Ի՞նչ հիանալի է հաւատացեալներուս համար կարգալ իր նուիրման պատմութիւնը: Պակաս հետաքրքրական չէ իր առեւտրական կարողու- թեանց Քրիստոսի ձեռքը անցնելու պարագան:

Վերոգրեալ պատկերը կը ներկայացնէ Մու- տիի մէկ քարոզութիւնը Լոնտոնի մէջ:

Այս գիրքը կարգացի՞ր, եթէ ոչ, անմիջապէս հատ մը ապօպրէ, կարգա եւ զոհ պիտի մնաս: Գինը ֆրանսա եւ Սուրբա 5 ֆրանք է, իսկ ար- տասահման 35 սէնթ, կամ 3 օրինակը մէկ տո- լար: Սուրհանդակի ծախքը մեր վրայ:

Հայ ընտանիքի Օրացոյցը 1938ի համար.— Ար- դէն պատրաստուած է «Բանբեր»ի կողմէ հրատարակուող Հայ ընտանիքին Օրացոյցը 1938ի եւ շրջաբերութեան մէջ է, պէտք է ապսպրել:

Կը ցաւինք որ անցեալ տարի եւս մեր սիրե- լի ընտանիքի անդամներէն ոմանք զրկուեցան անկէ: Երովհետեւ խորհեցան թէ՛ եթէ Դեկտեմ-

բերի մէջ ալ ապսպրելու ըլլան, կրնան մեր քով քանի մը հատ գտնել: Բայց անոնք արդէն սպա- ռած էին: Ուրեմն «Բանբեր»ի Յուլիոյ թիւը Ձե- ղի հասնելուն պէս մտածեցէ՛ր թէ քանի՞ հատի պէտք պիտի ունենաք եւ անոր համաձայն ա- պսպրեցէ՛ք որպէսզի ժամանակին եւ ժամանա- կէն առաջ ալ ընդունիք:

Այս տարուան պատկերները աննախընթաց- րէն գեղեցիկ են. տպագրութիւնն ալ շատ յաջող անցաւ, այնպէս որ ամէն կերպով ներկայանալի նուէր մըն է մեր սիրելիներուն ըլլալիք: Ամէն տարի գնահատութիւնն շնորհակալութիւն յայտ- նուած է մեզի անոր համար: Մենք ալ այս տա- րի մեր ջանքերը չխնայեցինք ամէն կերպով զոհ թողելու իւրաքանչիւր ընթերցող: «Բանբեր»ի Օրացոյցը մեր կողմէն աւետարանչական դործ մը կը նկատուի: Ոչ միայն ձեր ընտանեկան արկը գործարելու է այն, այլ նաեւ ձեր բա- րեկամին ու ազգականին — հոգեւորներու եւ անապաշխարներու: Մեր ազօթքն է որ անոնց- մէ իւրաքանչիւր օրինակը գացած տեղին մէջ օգտակար ըլլայ: Զանց չենք ըրած նաեւ մեր սովորութեան համաձայն առաքելական եկեղե- ցւոյ զինաւոր տօնական օրերը նշանակելու:

Ապսպրանքները մեր սովորական հասցէին հաճեցէ՛ք ընել: ԽՄԲ. «ԲԱՆԲԵՐ»ի